


Պաքուի մէջ ատենան մը 11 տարի բանտարկութեան դատապարտեց ալերի մը, Իրանի հաշուաւոր լրտեսութիւն կատարած ըլլալու յանցանքով: Ատենանին բանբերը յայտնեց, որ Թեյմուր Իսմայիլով Կիւնտրական գաղտնիքներ փոխանցած է Իրանի: Ան այլ մանրամասնութիւններ չփոխանցեց: Վճիռը տրուեցաւ այն պահուն, երբ Պաքու կը հասնէր Իրանցի պատուիրակ Մեհտի Սաֆարի, Կասպից ծովու կարգալիճակին մասին բանակցութիւններ կատարելու համար: Հաղորդուեցաւ, որ Սաֆարի նաեւ ալերի պաշտօնատարներու հետ պիտի քննարկէ նախագահ Հայտար Ալիեւի յառաջիկայ ամիս Թեհրան կատարելիք արցելութեան կապուած հարցեր:

ԻՍՐԱՅԷԼ ՊԱՏՃԱՌ ԿԸ ԴԱՌՆԱՅ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՈՒՇԱՅՈՒՄԻՆ

Կ'ԸՍԵ ԼԱՀՈՒՏ



Նախագահ Լահուտ իր խօսքի պահուն:

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ ընդունեց Լիբանանի մէջ օտար պետութիւններու դեսպանները եւ դիւանագիտական ներկայացուցչութեան պետերը, որոնք պապական յատուկ նուիրակ Լուիճի Կաթիի գլխաւորութեամբ Ամանոր առիթով շնորհաւորական այցելութիւն մը տուին Պապատա:

Հանդիպումին նախագահ Լահուտ վերահաստատեց Լիբանանի սկզբունքային կեցւածքները, յատկապէս ինչ կը վերաբերի 11 Սեպտեմբերի դէպքերուն, զորս դատապար-

Շարք՝ էջ 10

ՉԷՔ ՈՒ ԶԻՆԱՄԹԵՐՔ ՓՈԽԱԴՐՈՂ ՆԱԻՈՒՆ ՄԱՍԻՆ

ԹԷԼ ԱԻԻ ՊԻՏԻ ԵՐԱՊԱՐԱԿԵ ԱՐԱՖԱԹԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ԸԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ

Իսրայէլ յայտարարեց, որ այս շաբթուան մէջ պիտի հրապարակէ փաստաթուղթեր, որոնք կը հաստատեն թէ պաղեստինեան իշխանութեան նախագահ Նասիբ Արաֆատ ուղղակի պատասխանատու է անցեալ շաբթ գրաւուած նաւուն բեռին:

Արաֆատ, որուն խորհրդատուները հերքեցին, որ պաղեստինցի ղեկավարը կամ բարձրաստիճան այլ պաշտօնատարներ կապ ունին գէնք ու զինամթերք փոխադրող նաւուն հետ, Երկուշաբթի օր հրահանման մը բանալ ստուգելու համար մանրամասնութիւնները նաւուն միջադէպին: Արաֆատ ըսաւ, որ ռեւէ պաղեստինցի, որ կապ ունեցած է գէնք մաքսանենցութեան գործողութեան հետ, պիտի պատժուի:

Ձէնք փոխադրող նաւուն պատճառած վէճը պաղեստինցիներուն եւ Իսրայէլի միջեւ հարու-

ծեց ամերիկեան եւ եւրոպական խաղաղարար ճիգերը, որոնց նպատակն էր ամրապնդել քանի մը շաբթէ ի վեր տիրող համեմատական խաղաղութիւնը, որպէսզի կարելի ըլլայ գործադրութեան դնել զինադուլէ բանակցութիւններ ծրագրելու: Իսրայէլ կը պնդէ, որ անցեալ Հինգշաբթի օր կարմիր Մովու մէջ բռնազրաւուած նաւը կը պատկանի պաղեստինեան իշխանութեան, որ գէնք կը փոխադրէր Իրանէն: Արաֆատ ըսաւ, որ պաղեստինեան իշխանութիւնը կը հերքէ: Վարչապետ Արիէլ Շարոն կ'ըսէ, որ Արաֆատ տուած է գէնքը գնելու որոշումը: Իսրայէլացի բարձրաստիճան պաշտօնատարներ երէկ յայտնեցին, որ Արաֆատի մեղսակցութիւնը փաստող բաւարար փաստաթուղթեր ունին: Սակայն անոնք չըսին թէ ինչ են այդ փաստաթուղթերը կամ ինչ մանրամասնութիւններ կը պարունա-

կեն: Շարոնի արտաքին հարցերու մասին խորհրդատուն՝ Տանիէլ Այալոն, ըսաւ, որ փաստաթուղթերուն յոյսին տակ միջոցառումներ են մատնէր կ'ուղղուին Արաֆատի եւ պաղեստինեան իշխանութեան դէմ: Իսկ կառավարութեան բանբեր Ռաանան Կիսիս յայտնեց, որ յառաջիկայ երկու օրերուն ընթացքին փաստաթուղթերը հանրութեան սեփականութիւնը պիտի ցուցանեն: Կիսիս աւելցուց, որ փաստաթուղթերուն կարգին պիտի ըլլան նաւուն սեփականատէրերուն մասին արձանագրութիւններ: «Լոյծ Լիսթ» ընկերութիւնը յայտնած էր, որ նաւը արձանագրուած է Իրաքցի մը անունով: Սակայն Իրաք հերքեց դիտել տալով, որ որեւէ կապ չունի նաւուն ու անոր փոխադրած գէնքին հետ: Իրաք նաեւ դատապարտեց նաւուն

Շարք՝ էջ 10

ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆ ԴՐԱԿԱՆ ԿԸ ՀԱՄԱՐԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ 2001Ի ԱՐՏԱՔԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան երէկ մամլոյ ասուլիսի մը ընթացքին անդրադարձաւ 2001ի ընթացքին Հայաստանի արտաքին քաղաքականութեան:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման, նախարար Օսկանեան յատկանշական համարեց Հայաստանի եւ Ալըրպէյճանի նախագահներու Փարիզի եւ Քի Ուէսթի հանդիպումները: Թէեւ նշեալ հանդիպումներուն ընթացքին քննարկուած սկզբունքները հետագային չկիրարկուեցան, այսուհանդերձ ըստ նախարարին, Հայաստան դրական կը գնահատէ այդ հանդիպումները, յոյս ունենալով, որ անոնք իրրեւ հիմք կը ծառայեն տագնապի լուծման: 2001ի ընթացքին Ալըրպէյճան շարունակեց իր յաւակնութիւնները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: «Հայաստանի կողմէ Միջազգային ընտանիքին յստակօրէն ներկայացուեցաւ այն փաստը, թէ Ալըրպէյճան որեւէ պատմական, իրաւական կամ բարոյական իրաւունք չունի Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, եւ թէ ան երբէք մաս չէ կապուած անկախ Ալըրպէյճանին», յայտնեց նախարարը:

Անդրադառնալով Հայաստան - Թուրքիա յարաբերութիւններուն, նախարար Օսկանեան ողջունելի համարեց հասարակական մակարդակի շփումները հայ եւ թուրք ժողովուրդներուն միջեւ, միաժամանակ նշելով, որ երկու երկիրներուն միջեւ առկայ հարցերը կարելի է լուծել միայն պետական մակարդակի վրայ: «Թուրքիա կը շարունակէ Հայաստանի առջեւ դնել Լեռնային Ղարաբաղի տագնապը եւ Հայկական Յեղասպանութեան հարցը՝ իրրեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման նախապայմաններ. իսկ Հայաստան կը շա

Շարք՝ էջ 10

ՊԵՆ ԼԱՏԵՆ ԵՒ ՄՈԼԼԱ ՕՍՄԻ ՀԱՒԱՆԱԲԱՐ ՏԱԿԱԻՆ ԱՖՂԱՆԻՍՏԱՆ ԿԸ ԳՏՆՈՒԻՆ

Աֆղանիստանի մէջ նախկին թալեպան կառավարութեան երեք նախարարներ երէկ անձնատուր եղած են, մինչ Ուսամա Դըն Լատենի եւ Թալեպան շարժումին ղեկավար մոլլա Մոհամէտ Օմարի ամերիկեան գլխաւորութեամբ հետապնդումները կը թեւակոխէին իրենց չորրորդ ամիսը:

Այսուհանդերձ, երկրին նոր կառավարութիւնը յայտնած է, թէ կ'ենթադրուի, որ Դըն Լատեն եւ Օմար տակաւին Աֆղանիստանի մէջ կը գտնուին:

Անոնք սակայն կրնան բնաւ ալ ողջ չձերբակալուիլ, ինչպէս պատահած է «Քալիտա» ցանցին անդամ սուտանցիի մը պարագային: Ան անձնասպան եղած է երէկ, մինչ կը փորձէր հարաւային Գանտահար քաղաքին մէկ հիւանդանոցէն խոյս տալ:

Մինչ այդ, Սեպտեմբերէն ի վեր առաջին անգամ ըլլալով, ՄԱԿի Ուտեստեղէնի Համաշխարհային Ծրագիրը օժանդակութեան տրուած գործողութիւններու սկսած է արեւմտեան Հերաթ քաղաքին մէջ: Անիկա ամսուան մը համար բաւարար ունենուցնելու հարաւային քաղաքին մէջ 340 հազար եւ մօտակալ Մաւլախ Գաղթականին մէջ 324 հազար հոգիի համար:



Աֆղան գիւղացիներ հիւսիսային Աֆղանիստանի Պոնգվաշ գիւղի մէջ կը փակեն լրագրողներու ճամբան՝ ունեստեղէնի օժանդակութիւն խնդրելով:

Սակայն ՄԱԿի գործակալութիւնը պարզեց, որ Գանտահարի եւ այլ շրջաններու շուրջ հարիւր հազարաւոր ուրիշներ անօրի կը մնան, նկատի ունենալով որ օժանդակութեան գործակալութիւններուն համար շատ վտանգաւոր է այդ շրջանները մեկնիլ:

Միւս կողմէ, գերմանացի առաջին 70 պիւնտրները երէկ Քապուլ ուղղուած են՝ միանալու համար Բրիտանիոյ գլխաւորութեամբ ապահովութեան միջազգային ուժին:

Յարդ նուազ քան 5000 օտար պիւնտրներէ բաղկացած ուժ մը նկատի առնուած է: Սակայն երկրին փոխանցման ղեկավար

Համիտ Քարպայ երէկ ըսած է, թէ կրնայ դիմել այլ կառավարութիւններու, որ յաւելեալ ուժ հայթայթեն:

Ինչ կը վերաբերի Գանտահարի իշխանութիւններուն անձնատուր եղած երեք նախարարներուն, ըստ Գանտահարի կառավարիչ Կուլ Աղայի մէկ բանբերին, անոնք պաշտպանութեան, արդարութեան եւ ճարտարարուեստի նախարարներ եղած են:

Միւս կողմէ, աֆղան ցեղախումբի մը ղեկավարը յայտնած է, թէ թալեպաններու տեղեկատուութեան գրասենեակին պատասխանատունն է անոնց բարձրաստիճան բանբերներէն մէկը ձերբակալուած են

եւ յանձնուած ամերիկեան ուժերուն:

Շարք՝ էջ 9

ՀԱՅԱՍՏԱՆ - ՍՓԻՒՌՔ Բ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ՝ ՄԱՅԻՍԻՆ

Հայաստան - Սփիւռք երկրորդ խորհրդաժողովը նախապատրաստող յանձնաժողովը երէկ յայտարարեց, թէ խորհրդաժողովը պիտի կայանայ Երեւանի մէջ 27 - 28 Մայիս, 2002ին: «Երկրորդ խորհրդաժողովի նպատակն է միասնաբար քննարկել արդի պատմական, աշխարհաքաղաքական պայմաններուն մէջ մեր ժողովուրդի առջեւ ծագած խնդիրները, ամփոփել, վերլուծել կատարուած աշխատանքը եւ նախագծել համազգային տարողութիւն ունեցող խնդիրներու լուծման ուղղութեամբ մեր միասնական, գործնական քայլերը», նշուած է յայտարարութեան մէջ:

Յանձնաժողովը նաեւ յայտնեց, որ ի տարբերութիւն առաջինին, երկրորդ խորհրդաժողովը պիտի ըլլայ գործնական, աշխատանքները պիտի ընթանան մասնագիտական մասնաճիւղերու մէջ, պիտի քննարկուին տարբեր բնագաւառներու առնչուող գործնական ծրագրերը, պիտի ստեղծուին այդ ծրագրերուն իրականացման միջոցներ: Կ'ըսուի, որ յառաջիկայ ամիսներուն խորհրդաժողովը պատրաստող յանձնաժողովը քննարկումներ պիտի ունենայ Սփիւռքի գանազան գաղութներու մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՔԱԿԱՆ ԲԱՆԴՈՒՄԻ ՉԷՆՔԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԵՐՔԷ ԶՕՐ. ՔԻՎՐԻՔՕՂԼՈՒԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան բանբեր Սէյրան Շախոտեւարեան լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին անդրադարձած է Թուրքիոյ բանակի սպայակոյտի պետ գոր. Հիւսէյն Քիվրիքօղլուի վերջին յայտարարութիւններուն:

Զօր. Քիվրիքօղլու յայտարարած էր, թէ այլ երկիրներու կողքին Հայաստան եւս հաւաքական քանդակներ գէնքեր ունին: Շախոտեւարեան հերքած է եւ «անհեթեթ» որակած է թրքական բանակի սպայակոյտի պետին պնդումները: Ան նշած է, թէ Թուրքիա կը փորձէ յաշտ աշխարհի

մտադրութեան: «Ինչպէս յայտնի է, Իրաք ունի հաւաքական քանդակներ գէնքեր: Այսուհանդերձ, պատժամիջոցներ, որոնք սահմանուած են Պաղեստինի նկատմամբ, պէտք է կիրարկուին նաեւ Հայաստանի հանդէպ», նշած էր գոր. Քիվրիքօղլու:

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

«ԱԶԳԻԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԲԱՑԱՌԻԿԸ

ԱԶԳԻԱԿ

ՀՈՐԵՔՇԱՔԹԻ 2002

224 ԷՋ ՍԱԿ՝ 5000 L.Ո.

ՊՕՂՈՍ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԸԱՐՅ

ԱՂԱՄԱԼ ՅԱՐԻԹԻՒՆԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԱԻ

Երեւանի Կեդրոն եւ Նորք Մարաշ համայնքներու առաջին ատենի դատարանին մէջ, Երկուշաբթի, 7 Յունուարին, դատարար Մնացական Մարտիրոսեանի նախագահութեամբ սկսած է շախմատի նախագահի անվտանգութեան ծառայութեան աշխատակից Աղամալ Յարութիւնեանի դատավարութիւնը: Ան կը մեղադրուի անցեալ տարուան 25 Սեպտեմբերին «Առագաստ» սրճարանին մէջ տեղի ունեցած միջադէպին իրեն հետեւանք Պօղոս Պօղոսեանի սպանութեան մէջ:



ԿԱՂԱՆԴԸ ԼՕՍԻ «ՆԱՐՈՏ ԱՐՏԱԼՃԵԱՆ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

2002 թուականի Կաղանդը ուրախութիւն բերուած նաեւ ԼՕՍԻ «Նարոտ Արտալճեան» մանկապատանեկան գրադարանին ներս, 29 Դեկտեմբերին, կէսօրէ առաջ:



Ռուզաննա Ուլիկեան՝ խօսքի պահուն:



«Նարոտ Արտալճեան» մանկապատանեկան գրադարանի այցելու աշակերտներուն հետ:

Գրադարանին այցելու մանուկ եւ պատանի աշակերտներ ներկայացուցին Կաղանդի յատուկ յայտագիր մը՝ երգով, արտասանութեամբ, ստեղծելով գուռեր միջոցառում: Սրա հըր լեցումը էր մայրերով, որոնք ոգեւորուեցան ի տես իրենց արտասանող ու երգող, պարող ու մաղկանքներ ներկայացընող զաւակներուն:

Կաղանդ Պապան ալ ժամանեց իր աւանդական ոճով, շարժական նուէրներ, որոնք արմատապէս հիմնադրուած էին ԼՕՍԻ Շրջանային վարչութեան եւ Պուրն Համուտի քաղաքատնտեսութեան կողմէ: Հաճելի եւ օգտակար իրարու միացած ստեղծեցին տունական ցնծութիւն, եւ մայրեր ու իրենց զաւակները ջերմօրէն գնահատեցին ԼՕՍԻ ազգանուէր աշխատանքները եւ գոհունակութեամբ դիմաւորեցին 2002 Նոր Տարին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՅԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

10-12 Գեկտեմբերին Ժրճեւի մէջ կայացած «Գաղթականներու կարգավիճակ»-ի մասին օրէնքի ստորագրութեան 50ամեակին նուիրուած նախարարներու հանդիպումին ընթացքին Հայաստանի տարածքային կառավարման նախարար Յովիկ Աբրահամեան ներկայացուցած է Հայաստանի մէջ ապրող գաղթականներու պատկերը:

ԼՈՅՍ ՊԻՏԻ ՏԵՍԷ

Ռ. ՊԱՊԱՅԵԱՆԻ «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ» ԳԻՐՔԸ

Մօտ օրէն Մուկուայի «Նորմա» հրատարակչութեան կողմէ 3000 տպաքանակով, լոյս պիտի տեսնուի Հայաստանի Սահմանադրական դատարանի անդամ Ռաֆայէլ Պապայեանի «Ժամանակակից իրաւունքի քրիստոնէական արմատները» գիրքը:

ԽԸՐԻԸԶ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԱՌԱՆՑ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐԻ ԿՐՆԱՆ ՈՒՔՐԱՆԻԱ ԵՐԹԱԼ

1 Յունուար 2002էն սկսեալ խրճիթը քաղաքացիները կրնան առանց մուտքի արտօնագրի մուտք գործել Ուքրաինա: Ըստ Ուքրաինայի կառավարութեան մէկ որոշումին, անոնց Ուքրաինա-նիս մուտքը եւ հոն կէ բեր պիտի կատարուի անցագրի հիմամբ:

Advertisement for Yerevan Armenian products. Includes text: 'Yerevan Armenian products. Gifts For Any Occasion'. Shows various bottles and products. Address: Bourj Hamoud, Municipality Street, Facing Center Arine, # 63 Street. Fax: 01/254747. Tel.: 01/254747 - 03/348105. E-mail: tammy@lynx.nct.lb

Հայկական պատուիրակութիւնը համաժողովի մասնակիցներուն ներկայացուցած է 6 հազար էջոց նիւթ, որ կ'ընդգրկէ գաղթականներու հարցերուն առնչուող օրէնսդրական կէտեր, նախագիծեր եւ անոնց լուծման ծրագիրները: Ներկայացուած է նաեւ «Լեռնային Ղարաբաղի եւ Ազրայէլի միջեւ տագնապին վերաբերեալ որոշ փաստերու մասին» գեկտյոք:

Advertisement for Studio Lantern. Includes text: 'STUDIO Lantern. Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ. Հեռ. 01-268866 եւ 03-695399

«ԱԶԳԱԿ»-Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնել հրատարակման թուականէն առնուազ օր մը առաջ, Մինչեւ երեկոյեան ԺԱՄԸ 5:00: ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացառութիւն է: Մահագր կ'ընդունուի միայն ուղիղ, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:


ԱԿՆԱՐԿ ՀՈԳԵՒՈՐ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ

Տասնհինգերորդ դարակեսից մինչ քսաներորդ դարակես մարդկային հասարակութիւնը տարանջատուեց՝ ըստ հակամարտ դասակարգերի միջեւ անհաշտ պայքար մղելու անհրաժեշտութեան սկզբունքի: Քսաներորդ դարակեսից հասարակութեան անհաշտ (պետութեան) շահերն ու իրաւունքները սկզբունքային (պետութեան) շահերն ու իրաւունքները միմեանց հակադրելու սկզբունքով: Այսօր, կարող է մարդկութեանը հերքական տարանջատմամբ մտացածին մէկ այլ սկզբունքի համաձայն:

Փաստօրէն, շուրջ երկու հարիւրամեակ մարդկութիւնը շարունակաբար բաժանուած է երկու հակոնդրական հատկութեան: Մեր օրերը դասակարգային, մեր օրերը անհատի իրաւունքների սկզբունքներով: Ըստ էության, սակայն, ջրբաժան անցնում է շահագործողների եւ շահագործուողների, բռնադատողների եւ իրաւագուրկների, դահիճների ու զոհների միջեւ: Իրականում շուրջ երկու հարիւրամեակ մարդկային հասարակութիւնը նիզակ է ճեղքում՝ հողմադացների դէմ՝ ուղղորդութեան չառնելով, որ ջրբաժանը եւ պատօրէն, եւ ըստ էության անցկացում է ազգերի ու ազգային հաստատութիւնների միեւնոյն հասարակութեան բաղադրիչ տարրերի միջեւ:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

Ա Շ Խ Ա Ր Տ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱՄՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ՝

Հ.Մ.Ը.Մ. - ՇԱՊԱՊ ՍԱՅԷԼ

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան 6րդ հանգրուանի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական կապը, այսօր՝ 20-րեքշաբթի, կէսօրէ ետք ժամը 2:15ին Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Շապապ Սահէլը:

5րդ հանգրուանին Շապապ Սահէլ 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Սաժէլը (որ կը կրէ եղանակի իր առաջին պարտութիւնը), բարձրացաւ 2րդ դիրք, միայն կոլէվըրէյի տարբերութեամբ ետ մնալով պարագուսի դիրքը գրաւող Սալամին: Նշենք, թէ վերոնշեալ երկուքէն բացի ցարդ պարտութիւն չկրող երրորդ խումբն է Ահո: 3արդ յաղթանակ չարձանագրող խումբերն են՝ Ռասիկ, Հ.Մ.Ը.Մ., Հ.Մ.Մ. եւ Ահի Սալտա:

Հ.Մ.Ը.Մ., որ այս եղանակին իր երրորդ մրցումը պիտի կատարէ Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ, պետք է անպայման երեք կէտ խլէ իր մրցակիցէն եւ փորձէ արձանագրել եղանակի իր առաջին յաղթանակը՝ պայքարելով մինչեւ մրցումին աւարտը: Իր կատարած նախորդ հինգ մրցումներէն Հ.Մ.Ը.Մ. յաջողած է ապահովել երկու ոչ անբաւարար կէտեր, ինչ որ այժմ խումբը դրած են վտանգաւոր գոտիի սահմաններուն վրայ:

Ստորեւ՝ 6րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ԱՅՍՕՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Ռասիկ - Ահ. Սալտա	2:15ին	Ճոնիէ
Ահո - Սաժէլ	2:15ին	Մ. Աւան
Հ.Մ.Ը.Մ. - Շ. Սահէլ	2:15ին	Պ. Համուտ
Անսար - Ախա Ալէյ	5:00ին	Պէյրուք

ՎԱՂԸ	ԺԱՄ	ՍԱՖԱ
Սաֆա - Պրոժ	2:15ին	Սաֆա
Հ.Մ.Մ. - Սալամ	2:15ին	Պ. Համուտ
Նրժմէ - Թ. Սուր	5:00ին	Մ. Աւան

ՊԸՆ ԼԱՏԷՆ ԵՒ ՄՈԼԼԱ...

Շարունակուած Ա. ԷջէԳ

Պրն Լատենի եւ մոլլա Օմարի պարագային, աներկեան ցինորակութեան բանքեր մը երէկ յայտնած է, թէ աներկեան ուժերը պիտի դարձնեն անոնց «շուքերը» հետապնդելէ եւ պիտի կեդրոնանան «Քայիտա»-ի դիմադրող մնացեալ անդամները արմատախիլ ընելու աշխատանքին վրայ:

Աներկեան օդանայեր երէկ թողուցիկներ քափած են արեւելեան Աֆղանիստանի վերեւ՝ զգուշացնելով մարդիկ թայեպաններու կամ «Քայիտա»-ի անդամներու ապաստան տալէ, նշելով ուրբակոծումի սպառնալիքը:

Բրիտանիոյ վարչապետ Թոնի Դեյր Երկուշաբթի օր Աֆղանիստան այցելած է եւ յայտարարած է, թէ աշխարհի Աֆղանիստանը պիտի չմոռնայ:

Մինչ այդ, Փաքիստան, որ մինչեւ Սեպտեմբեր 11 զօրավիգ կը կանգնէր թայեպաններուն, յոյս յայտնած է յառաջիկայ շաբաթ Քապուլի մէջ իր դեսպանատունը վերաբանալու:

Իսկ Իսլամական խորհրդածոյողի Կապակերպութիւնը քննութիւն պահանջած է «Հիւսիսի Դաշինքին անձնատուր եղած պատերազմի բանտարկեալներու ջարդին» շուրջ, հակառակ այն հաւաստիքներուն, թէ անոնք ՄԱԿի պիտի յանձնուին:

Հիւսիսի Դաշինքը յայտնած է, թէ 600 բանտարկեալներ, որոնց կարգին՝ չեչններ, արաքներ եւ փաքիտանցիներ եւ իր պինտալներէն աւելի քան 40 հոգի սպանուած են 3օրուան բախումներու ընթացքին, որոնք ծալր տուած են Նոյեմբերին Հիւսիսային Մապար - Ի - Շարիֆ քաղաքին մէկ ամրոցին մէջ, բանտարկեալներու ըմբատութիւնէ մը ետք:

ՅԵՏԱՅՈՒՆ ԹԻՐԱՆՆԵՐ

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան փոխ նախարար Փոյ Վոյֆոլից երէկ լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ քսած է, որ ահաբեկչութեան դէմ Ուաշինկթընի պատերազմին յառաջիկայ հանգրուանը կրնայ կեդրոնանալ ահաբեկչները դուրս պահելու ճիգերուն վրայ՝ Սոմալիի, Եմէսի, Իստանբուլի եւ Ֆիլիպիններու նման երկիրներէ:

Ան «Նիւ Եորք Թայմզ» թերթին քսած է, որ Փենթագոնը այժմ կ'աշխատի Ֆիլիպիններու նման բարեկամ երկիրներու հետ, որոնք աներկեան օժանդակութիւնը կ'ողջունեն:

Սակայն, շեշտած է ան, Փենթագոնը նաեւ խիստ կարելիութիւն կու տայ Սոմալիի եւ Եմէսի մէջ ահաբեկչութեան հաւանական կեդրոններու հաստատման հարցին, նկատի ունենալով, որ անոնք կարելիութիւնը չունին առանձին արմատախիլ ընելու ահաբեկչներ:

Վոյֆոլից թերթին յայտնած է, որ Փենթագոնը չ'անտեսեր ցինորակութեան գործողութիւններ, որեւէ երկրի դէմ, ներառեալ՝ Իրաքի:

ՌՈՒՍԻԱ ԿՐՆԱՅ ՄԷԿ ՏԱՐԻԷՆ ...

Շարունակուած 3րդ ԷջէԳ

Թէ Ռուսիա կրնայ մէկ տարիէն պատրաստ ըլլալ առեւտուրի ընդհանրական ակումբին միանալու, անցեալ ամսուան Չինաստանի անդամակցութեան ետք: Օսլոյի մէջ արտասանուած խօսքի մը մէջ, Մուր յայտնած է, թէ Ռուսիոյ մէջ կան խումբ մը նախարարներ, որոնք «կամրոք ունին իրենց երկիրը համաշխարհային կապակցութեան անդամ դարձնելու»: Ռուսիա, որ մեծագոյն տնտեսութիւնն է, որ տակահին 144 անդամ հաշուող կապակցութեան շեքի միացած, յայտնած է, թէ կը պատրաստուի բանակցութեան յառաջիկայ հանգրուանին եւ կը մշակէ օրէնքներու նախագիծեր՝ իր առեւտուրական գործողութիւնները յարմարեցնելու Ա. Հ. Կապակցութեան օրէնքներուն:

ԹԵՆԻՍ

ՄՊԱՆԻԱ ՇԱՀԵՑԱԻ «ՀՈՓՄԸՆ» ԲԱԺԱԿԸ

Անցեալ շաբաթավերջին Աւստրալիոյ մէջ վերջ գտաւ թենիսի «Հոփմըն» բաժակի մրցաշարը՝ Սպանիոյ յաղթանակով, որ աւարտականին 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Միացեալ Նահանգները:

Հակառակ անոր, որ աղջկանց մրցումին Արանցա Սանչես - Վիքարիո 6 - 1 եւ 7 - 6 արդիւնքով պարտութիւն մը կրեց Մոնիքա Սելէշէն, սակայն Թոնի Ռոպրետո յաջողեցաւ արդիւնքը 1 - 1 հաւասարեցնել, երբ 6 - 3, 2 - 6 եւ 7 - 6 արդիւնքով պարտութեան մատնեց Ժան Միշէլ Կամպիլը: Խառն Կոյգի մրցումներուն Ռոպրետո - Վիքարիո զոյգը յաջողեցաւ 6 - 4 եւ 6 - 2 արդիւնքով պարտութեան մատնել Կամպիլ - Սելէշ զոյգը եւ տիրանալ տիտղոսին: Իր արձանագրած



Թոնի Ռոպրետո եւ Արանցա Սանչես - Վիքարիո

այս յաղթանակէն ետք Վիքարիո յաջողեցաւ այսպիսով մեծ իրագործում մը կատարել, որովհետեւ ան դարձաւ առաջին մարզիկը, որ երկրորդ անգամ ըլլալով կը բարձրացնէ այս բաժակը: Ան 1990ին իր եղբոր՝ Էմիլիոյի հետ, տիրացած էր միեւնոյն տիտղոսին:


●ՍԻՍՏՐԱԼԻՈՅ քսց թենիսի մրցաշարքին պատասխանատունէրը երէկ յայտնեցին,

թէ յառաջիկայ շաբաթ սկսելիք աշխարհի առաջին թենիսի կրան շըլէմի մրցաշարքին իր մասնակցութիւնը պիտի չկարենայ բերել թիւ 1 դասուած ամերիկացի Լիւստել Տէվլըն-փորթ՝ վիրաւոր ըլլալով: 2000ին նոյն այս տիտղոսը շահած Տէվլըն-փորթը, անցեալ Նոյեմբերին վիրաւորելով փութակահին ի վիճակի չէ նմանորինակ մրցաշարքի մը մասնակցիլ:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՃՈՐՏԸՆ ՆՃԱՆԱԿԵՑ ԻՐ ԵՐԵՍՈՒՆ ԸԱԶԱՐԵՐՈՐԴ ԿԵՏԸ

Էն. Պի. Էյ.ի երէկուան մրցումներուն, Ֆիլատելֆիա Սիքսըրզ արձանագրեց իր 15րդ յաղթանակը, իր դաշտին վրայ 116 - 92 արդիւնքով պարտութեան մատնելով Լոս Անճելըս Բլիփըրզը: Յաղթական կապին մարզիկ Էլըն Իվըրսըն նշանակեց 30 կէտ, 10 ռիպաուսն եւ 11 էսիսք: Իսկ անոր խմբակից Տիքեմայէ Մուրմայօ նշանակեց 16 կէտ եւ 12 ռիպաուսն:



Մայքըլ Ճորտըն

Նիւ Եորք Նիքս կրեց իր 10րդ պարտութիւնը, երբ 90 - 79 արդիւնքով պարտուած հեռացաւ Սան Անթոնիօ Սփրիդի դաշտէն: Թիմ Տանքըն նշանակեց 21 կէտ եւ 12 ռիպաուսն, իսկ Նիքսի մարզիկ Մարքու Քամպի՝ 21 կէտ եւ 22 ռիպաուսն:

Անցեալ շաբաթավերջին Ուաշինկթըն Ուիլարտո յաջողեցաւ 89 - 83 արդիւնքով պարտութեան մատնել Շիքակօ Պուլվը: Մայքըլ Ճորտըն, որ դաշտ ներկայացած էր իր նախկին կապինի՝ Պուլվի դէմ, յաջողեցաւ նշանակել 29 կէտ: Այսպիսով, ան դարձաւ Էն. Պի. Էյ.ի պատմութեան մէջ չորրորդ մարզիկը, որ կը նշանակէ երեսուն հազար կէտէ աւելի:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները:
Շարլոթ Հոնդէթթ - Տենսիլ Նակեթթ 94 - 80
Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզ - Բլիվինթոն Քաւալիրզ 98 - 72
Ֆիլատելֆիա Սիքսըրզ - Լոս Անճելըս Բլիփըրզ 116 - 92
Օրլանտօ Մէճիք - Պոսթըն Սելֆիքս 98 - 87
Միննեսոթա Վուլվզ - Տիթթոնիթ Փիսթընզ 109 - 93
Սիքթըլ Սուլթըրսթիքս - Շիքակօ Պուլվ 100 - 88
Սան Անթոնիօ Սփրիդ - Նիւ Եորք Նիքս 90 - 79

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը:
Լոս Անճելըս Բլիփըրզ - Ուաշինկթըն Ուիլարտո
Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզ - Աթլանթա Հոքս
Մայնի Հիթ - Նիւ Ճըրզի Նեթթ
Լոս Անճելըս Լէյքըրզ - Տիթթոնիթ Փիսթընզ
Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզ - Մենֆիս Կրիլլիզ
Տենսիլ Նակեթթ - Տալաս Մավըրիքս
Նիւ Եորք Նիքս - Հիուսթըն Ռոքեթթ
Ֆէօնիքս Սանզ - Եուրա Ճէյ
Միլուոքի Պաքս - Կոլտըն Սթըյլ Ուորիըրզ

ՆԵՇԵԼԱՐՇԱԻ ԷՔՍՐԵՆԸ ԶՈՐՍ ՏԱՐԻՈՎ ԿԱՆԱԿԱՅՈՒԵՑԱԻ

Շուէտացի հեծելանորդ Նիքլաս Էքսըրսըն երէկ իր երկրին հեծելաշաւի ֆետերասիոնին կողմէ չորս տարիով կախակայութեամբ անցեալ Հոկտեմբերին Փորթուգալի մէջ տեղի ունեցած աշխարհի ախոյեանութեան մրցումներուն ընթացքին թմրեցուցիչ գործածած ըլլալու յանցանքով ամբաստանուելով:

Էքսըրսըն, որ 1999ին Իտալիոյ շրջակայքին (ժիրօ) հանդիսացած էր 6րդ, ընդունեց, որ թմրեցուցիչ գործածած էր:

Ան այսպիսով Շուէտի մարզական աշխարհին մէջ կը դառնայ առաջին մարզիկը, որ այսպէս երկար պատիժ մը կը ստանայ: Շուէտի հեծելաշաւի ազգային խումբին մարզիչ Հանս Ֆոլք Ըսաւ, սակայն թէ կ'անկալայէր շատ աւելի մեծ պատիժ մը. ցմահ կախակայութիւն:

ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍԵՐԹՊՈՒԼԻ ԱՄՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ՝ Հ.Մ.Ը.Մ. - ՍԱԺԷՍ

Լիբանանի պասերթպոլի աղջկանց, Ա. դասակարգի ախոյեանութեան 13րդ հանգրուանի մրցումներուն, այսօր Հ.Մ.Ը.Մ.ի «Թնճուկեան» մարզադաշտին վրայ, Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց ներկայացուցչական կապը կը հիւրընկալէ Սաժէս Մար Տուէթը: Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 19:00ին:

Լիբանանի աղջկանց Բ. դասակարգի ախոյեանութեան 10րդ հանգրուանի գծով երէկուան տեղի ունեցած մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ. Պէյրուք եւ Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ պարտութիւններ կրեցին իրենց մրցակիցներէն: Սկզբունքով անոնք տեղի պիտի ունենային անցեալ Կիրակի օր, սակայն Ա. Տննդեան տօսին առիթով յետաձգուած էին Երեքշաբթի օրուն: Պէյրուքի կապը պարտութեամբ Ռիատի Պէյրութին 55 - 32 արդիւնքով, իսկ Պուրճ Համուտի կապը Շապապ Ռիատիին՝ 46 - 30 արդիւնքով:

Լիբանանի պասերթպոլի ֆետերասիոնը երէկուան ժողովին, փոփոխութեան ենթարկեց տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն թուականները:

Սկզբունքով այսօր տեղի ունենալիք 18րդ հանգրուանի մրցումները, շաբաթով մը յետաձգուեցան եւ անոնք տեղի պիտի ունենան յառաջիկայ 20րեքշաբթի, 16 Յունուարէն ետք:

Կապուեցաւ յատուկ յանձնախումբ մը, որուն մաս կը կապեն Լիբանանի պասերթպոլի ֆետերասիոնի նախագահ Ժան Համամ, ընդհանուր քարտուղար Ռոպէր Ապու Ապտալլա եւ ազգային խումբերու պատասխանատու Ժան Մամու, որ ներկայ պիտի ըլլայ յառաջիկայ Փետրուար 5ին, Ինտիանապոլիսի մէջ (Միացեալ Նահանգներ) տեղի ունենալիք աշխարհի ակումբներու 14րդ ախոյեանութեան մրցաշարքին վիճակագրութեան:

Ստորեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Բ. դասակարգի տղոց ախոյեանութեան մրցումներուն կատարելիք փոխուած յայտագիրը:

18րդ ՀԱՆԳՐՈՒՄ
20րեքշաբթի, 16 ՅՈՒՆԻՍՅՈՒՆ
Ահիաս Ռիատի - Հ.Մ.Ը.Մ.
Ժամը 21:00ին Քահրապա

19րդ ՀԱՆԳՐՈՒՄ
ՇԱԲԱԹ, 19 ՅՈՒՆԻՍՅՈՒՆ
Հ.Մ.Ը.Մ. - Լիբանանի բանակի հաւաք.
Ժամը 20:30ին «Թնճուկեան»

20րդ ՀԱՆԳՐՈՒՄ
20րեքշաբթի, 23 ՅՈՒՆԻՍՅՈՒՆ
Ռիատի Ֆէյթրուս - Հ.Մ.Ը.Մ.
Ժամը 21:00ին Քֆար Հպապ

21րդ ՀԱՆԳՐՈՒՄ
ՇԱԲԱԹ, 26 ՅՈՒՆԻՍՅՈՒՆ
Ռոպէր - Հ.Մ.Ը.Մ. Ժամը 20:30ին Պրըդրին

22րդ ՀԱՆԳՐՈՒՄ
20րեքշաբթի, 30 ՅՈՒՆԻՍՅՈՒՆ
Հ.Մ.Ը.Մ. - Ռիատի Ղապիթ
Ժամը 21:00ին «Թնճուկեան»

ԱԹԼԵԹԻԶՄ

ՄԵԼԻՆՏԱ ԼՔԵՑ ԱՍՊԱՐԷԶԸ

Աւստրալիացի նախկին սփրինքըր եւ աշխարհի ախոյեան Մելինտա Կէնսֆորտ - Թէյլըր երէկ լքեց աթլետիկ միջառիւծ, յայտնելով, որ վերջին շրջանին շատ յաճախ վիրաւոր ըլլալով որոշած էր լքել իր ասպարէզը:

1995ին տեղի ունեցած աշխարհի ախոյեանութեան մրցումներուն 200 մետր վազքի տիտղոսին տիրացած 30 տարեկան Մելինտա 13 տարուան ասպարէզ մը ունի աթլետիկ միջառիւծի մէջ:

Հակառակ անոր, որ ան երեք անգամ Աւստրալիոյ հետ իր մասնակցութիւնը բերաւ Ռղիմպիականի մրցումներուն, ան իր յաւազոյն արդիւնքը արձանագրեց 1998ին Քուալա Լամպուրի մէջ:

ԱԹԼԵԹԻԶՄ

ՈՒԹ ԶԱՂԱՔՆԵՐ ԹԵԿՆԱԾՈՒ՝ 2005Ի ԱՇԽԱՐՀԻ ԱՄՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

Աթլետիկ միջազգային Կոմիտէն երէկ յայտնեց, թէ ութ քաղաքներ՝ Պերլին, Միւնիխ, Շտուտգարթ, Պրիսթի, Պոտսամիէշ, Հելսինքի, Հոնո եւ Մոսկուա, իրենց թեկնածութիւնը ներկայացուցած են հիւրընկալելու համար 2005ի աշխարհի աթլետիկ միջառիւծի մրցումները:

Անիկա յառաջիկայ 14 Ապրիլին, Նայրոպիի մէջ իր ունեցած հանդիպումին պիտի վճռէ, թէ ո՞ր քաղաքը պիտի ըլլայ 2005ի աշխարհի աթլետիկ միջառիւծի հիւրընկալողը, որ Ռղիմպիականի մրցումներին եւ Մոնտրալի ետք կը հանդիսանայ աշխարհի երրորդ մարզական կարեւոր իրադարձութիւններէն մէկը:

ԱԶԳԱԿ

ՉԵԶԵՆԻՈՅ ՏԱԳԼԱԴ

ԱՐԿՈՒՆԻ ՄԵԶ ՍԱՍՏԻԿ ԲԱՆՈՒՄՆԵՐ

ՄՈՍԿՈՒԱ, 8 (ՌՈՅԹԸՐԸ)- Բուսական ուժերը Երեքշաբթի օր յայտնաբերեցին...

Տեղացի պաշտօնատարներ յայտնաբերեցին...

Սակայն ընթացող շրջանին այլ գոտիներում...

Երկուշաբթի օր, Արկուսի մեջ տեղի ունեցած...

Արեւմուտքի ղեկավարներ կոչ ուղղած են...

Սակայն քաղաքական որևէ լուծումի փորձ...

ԻՐԱՆ

ԱՅԼԱԽՈՂՆԵՐՈՒ

ԴՈՒՆՓԱԿ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԹԵՎՐԱՆ, 8 (ՌՈՅԹԸՐԸ)- Իրանի լեղափոխական...

Ամբաստանելու էր, որոնց կարգին են պատկանում...

Անոնցմէ վեցը բանտարկուած կը մնայ զինուորական...

Երեքշաբթի օրուան նիստին ընթերցուեցան ամբաստանագիրները...

ԻՐԱՔ - ԻՐԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՂՏԱՍ, 8 (ՌՈՅԹԸՐԸ)- Իրաքի արտաքին գործոց նախարարը...

Օոցի պատերազմին իրաքեան ճամբորդատար...

«Ռաֆիտէյն» հաղորդեց, որ նախարար Նաժի Սապրիի...

ԹԵՆ ԱՒԻՒ ՊԻՏԻ ԵՐԱՊԱՐԱԿԵ ...

Շարունակուած Ա. Էջէն

Բունագրաւուծը խորայնէն եւն ուժերուն կողմէ, դիտել տալով...

Միւս կողմէ, խորայնէն լացի կարգ մը պաշտօնատարներ...



Պաղեստինցի ոստիկան մը ցոյց կու տայ խորայնէն բացակից կողմէ արձակուած հրթիռներ Կազայի մէջ:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան...

Նաև ունենալու է իրականութիւնը իմանալ որ եւէ եզրակացութեան յանգելէ առաջ:

Պաղեստինեան իշխանութեան տեղեկատուութեան նախարար Եասէր Ապտ Ռապպո ըսաւ, որ հետաքննութիւնը պիտի վարեն բարձրաստիճան զինուորականները:

Ռապպո աւելցուց, որ հետաքննութեան արդիւնքները ստուգելու համար կարելի է միջազգային յանձնարարութեամբ մը յաւանազանել:

Նաև ունենալու է իրականութիւնը իմանալ որ եւէ եզրակացութեան յանգելէ առաջ:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԱՊԱՏՈՒԹԵԱՆ ՈՒՇԵՐ

ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆ ԴՐԱԿԱՆ ԿԸ ՅԱՄԱՐԵ ...

Շարունակուած Ա. Էջէն

Բարձրացման եւ քաղաքական յարաբերումներուն մակարդակին համապատասխան դարձնելու փորձերը:

Անդրադառնալով Միացեալ Նահանգներու հետ յարաբերումներուն, նախարար Օսկանեան նշեց, որ «Սեպտեմբեր 11-ին ետք Միացեալ Նահանգներ կեդրոնացան ահաբեկչութեան հաստատման վրայ:

Իսուելով Հայկական Յեղափոխութեան միջազգային ճանաչման հարցին մասին, Օսկանեան ըսաւ, որ այն կը մնայ Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգին վրայ:

Նախարար Օսկանեան մանրամասն անդրադարձաւ Հայաստանի երկկողմանի յարաբերութիւններուն:

Նախարար Օսկանեան անդրադարձաւ Հայաստանի երկկողմանի յարաբերութիւններուն միջոցով հայ-նոսական յարաբերութիւններուն մասին:

Ան ընդգծեց, որ Հայաստանը Հայաստանին կողմէ կը դիտուի իբրեւ պաշտպանական գործընթացի մը շրջանային կայունութեան լուրջ նախադրեալ:

Իսուելով Եւրոպական Միութեան հետ յարաբերութիւններուն մասին, նախարար Օսկանեան նշեց, որ Հայաստանը Եւրոպական Միութեան հետ յարաբերութեան մասին յարաբերութիւններուն մասին, նախարար Օսկանեան նշեց, որ Հայաստանը Եւրոպական Միութեան հետ յարաբերութեան մասին...

րուն մասին, նախարար Օսկանեան տեղեկացուց, որ կարելի եղած է եւրոպական կողմին մօտ յառաջացնել աւելի իրատեսական մօտեցում, ինչ կը վերաբերի Մեծամորի կորիզային կայանին, ըստ որում, կայանին փակումը պայմանաւորուած է Հայաստանի համար ուժանիւթի արտադրութեան այլընտրանքային բաւարար հնարարութիւններու ստեղծմամբ:

Նախարար Օսկանեան 2001ի կարեւոր իրադարձութիւններէն նկատեց Եւրոպական իտրիտիւնը Հայաստանի անդամակցութեան մագործակցութեան համար: Ասիկա սակողմէ Հայկական Յեղափոխութեան ճանաչման մասին, որ 2001ի ընթացքին Հայաստան շարունակած է աշխուժ համագործակցութիւնը:

Նախարար Օսկանեան յայտնեց, որ Հայաստանը Եւրոպական Միութեան հետ յարաբերութեան մասին յարաբերութեան մասին, նախարար Օսկանեան նշեց, որ Հայաստանը Եւրոպական Միութեան հետ յարաբերութեան մասին...

Նախարար Օսկանեան 2001ի կարեւոր իրադարձութիւններէն նկատեց Եւրոպական իտրիտիւնը Հայաստանի անդամակցութեան մագործակցութեան համար: Ասիկա սակողմէ Հայկական Յեղափոխութեան ճանաչման մասին, որ 2001ի ընթացքին Հայաստան շարունակած է աշխուժ համագործակցութիւնը:

Նախարար Օսկանեան անդրադարձաւ Հայաստանի երկկողմանի յարաբերութիւններուն միջոցով հայ-նոսական յարաբերութիւններուն մասին:

Ան ընդգծեց, որ Հայաստանը Հայաստանին կողմէ կը դիտուի իբրեւ պաշտպանական գործընթացի մը շրջանային կայունութեան լուրջ նախադրեալ:

Իսուելով Եւրոպական Միութեան հետ յարաբերութիւններուն մասին, նախարար Օսկանեան նշեց, որ Հայաստանը Եւրոպական Միութեան հետ յարաբերութեան մասին...

ԽԱՉԲԱՌԻ ԹԻՒ 5047 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

11x11 grid with numbers 1-11 and a pattern of black squares representing a 5047 magic square.

- ԵՐՈՒՋՈՒՄԱԿԱՆ 1. Հայրենի լրատու գործակալութիւն մը (երկու բառ): 2. Պահեստ - Երնէ՛կ: 3. Ծաղածու - Սալուղի հարց: 4. Ծաղակրատ թռչուն: 5. Իգական օտար անուն - Հանածոյ: 6. Պոլսահայ մեծահարուստի տրուած տիտղոս - Դեղձի չիր: 7. Միջերկրականեան երկիր: 8. Ժխտական մասնիկ - Երեքշաբթի - Նշանաւոր անկուշտ: 9. Հայ աշխարհակալ - Ուտելիք, ջամբ: 10. Գործ, վարմունք: 11. Անբարեացակամ - Պետրոս Դուրեանի քերթուածներէն - Քաթիլ:

ԹԻՒ 5046 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ 11x11 grid with letters and numbers representing a 5046 magic square.

ԻՍՐԱԵԼ ՊԱՏՃԱՌ ԿԸ ԳԱՌՆԱՅ...

Շարունակուած Ա. Էջէն
տած է միջազգային ընտանիքը:
Նախագահ Լախուտ յիշեցուց, որ Լիբանանի ահաբեկչութիւնը դատաւարած առաջին պետութիւններէն մէկն էր, կոչ ուղղելով, որ յատկապէս սահմանուած տրուի ահաբեկչութեան եւ պայն չփորձելու ժողովուրդներու ինքնապաշտպանութեան եւ բռնագրաւումին դէմ զինելու իրաւունքին հետ:

Large advertisement for Toshiba VCRs. Features a 21-inch flat screen TV and two VCR models: Model 21D3XMJ (2 Head VCR Model V-E28 \$119) and Model V-E38 (4 Head VCR Model V-E38 \$149). Includes contact information for AZTAG.